ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 նոյեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

171
(2651)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 143

Սեպտեմբերի 29-ի կառավարության նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը, խոսելով կրթության կարեւորության մասին, մի քանի անգամ կրկնեց, որ այն մարդիկ, որոնք պատրաստ են 75,000 դրամ աշխատավարձով աշխատել, չունեն կրթություն:

«Կրթությունը նրա մասին է, որ մենք մարդուն հնարավորություն տանք, որ ինքը ստիպված չլինի ամիսը 75,000 դրամով աշխատել: Եթե մարդը 75,000 դրամ աշխատավարձով ամիսը աշխատում է, եկեք հասկանանք՝ դա ինչ է նշանակում: Դա նշանակում է, որ մարդը նորմալ կրթություն չի ստացել»,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

«Փաստերի ստուգման հարթակ»-ը որոշել է պարզել, թե Հայաստանում կրթության ոլորտում աշխատող քանի մասնագետ է ստանում ամսական 75,000 դրամից պակաս աշխատավարձ:

Հայաստանում մոտ 5000 ուսուցիչներ ստանում են 75 հազար դրամից պակաս աշխատավարձ:

ՊԵԿ-ի խնդրանքով մի քանի լրացուցիչ հարցումներ ուղարկելուց հետո, ի վերջո, ստացել են ավելի քան 40 դասակարգիչների (մասնագիտացումների) քանակական տվյալներ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր դասակարգչի տակ գրված քանակի աշխատողներ ամսական ստանում են 75,000 դրամից պակաս աշխատավարձ:

Եվ այսպես, ըստ ՊԵԿ-ից ստացված տվյալների՝ Հայաստանում բարձրագույն կրթություն ստացած, կրթության ոլորտում աշխատող մոտ 5000 մարդ ստանում է մինչեւ 75,000 դրամ աշխատավարձ:

Առավել մեծ թիվ են կազմում քոլեջների եւ բուհերի դասախոսները: 722 դասախոս ամսական ստանում է մինչեւ 75,000 դրամ աշխատավարձ: Նույնչափ աշխատավարձ է ստանում նաեւ 640 գրադարանավար, 509 լաբորանտ, 248 օտար լեզվի եւ գրականության ուսուցիչ, 257 հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ, 229 հոգեբան, 217 մաթեմատիկայի ուսուցիչ եւ այլն: Ընդհանուր առմամբ, Հայաստանում ավելի քան 2400 ուսուցիչ ամսական ստանում է մինչեւ 75,000 դրամ աշխատավարձ:

Այսպիսով, փաստենք, որ վարչապետի կողմից արված պնդումն այն մասին, որ 75 հազար դրամ աշխատավարձով աշխատող մարդը կրթություն չի ստացել, փաստացի սխալ է. Հայաստանում հազարավոր բարձրագույն կրթություն ստացած անձինք աշխատում են ամսական մինչեւ 75 հազար դրամ աշխատավարձով: Նա թերեւս հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ՝ նոյեմբերի 28-ին, խորհրդարանական մեծամասնությունը՝ ՔՊ խմբակցությունը, աշխատանքային քննարկում-նիստի ժամանակ մի քանի հյուրերի է ընդունել- ճանապարհել: Բանն այն է, որ խորհրդարանականներն առաջիկայում Կենտրոնական բանկի, հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի, հաշվեքննիչ պալատի անդամներ պետք է ընտրեն, ու, մեր տեղեկություններով, ՔՊ-ականները երեկ վերոնշյալ կառույցների անդամ դառնալ ցանկացող թեկնածուների հետ են հանդիպել, քննարկում ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկութեուններով՝ Կենտրոնական բանկի անդամ դառնալ են ցանկանում Նարեկ Ղազարյանն ու Արմեն Նուրբեկյանը: Նրանք երեկ հանդիպել են իշխող մեծամասնության հետ, քննարկում ունեցել: Քաղաքական իշխանությունը, մեզ հասած լուրերի համաձայն, դեմ չէ ո՛չ Ղազարյանի, ո՛չ Նուրբեկյանի թեկնածությանը: Տեղեկացանք նաեւ, որ նրանք երկուսն էլ ԿԲ-ի հին կադրերից են: Որպես հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածու՝ իշխանությունը մտադիր է Գագիկ Բարսեղյանին ներկայացնել ու սատարել: Նա, նշենք, ԱԺ բյուջետային գրասենյակի փորձագետ է: Ինչ վերաբերում է ՀՌՀ անդամի թեկնածությանը, ապա նիստին մասնակցած պատգամավորները մեզ տեղեկացրին, որ երիտասարդ աղջկա միայն անունն են հիշում՝ Լենա: Ինչ վերաբերում է նրան՝ որպես ՀՌՀ անդամի թեկնածու առաջադրելուն ու սատարելուն, ապա ՔՊ-ում այդ մասով դեռեւս վերջնական տեսակետ չկա: Փաստն այն է, սակայն, որ ՀՌՀ անդամ դառնալ ցանկացող աղջիկը նիստին մասնակցող առանց այն էլ սակավաթիվ պատգամավորների մոտ չի տպավորվել, եւ որեւէ մեկը նրա ազգանունը չէր մտաբերում: Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը երեկ նկատեց, որ 71 պատգամավոր ունեցող խմբակցության աշխատանքային նիստին երեկ մեկ տասնյակին մոտ մարդ էր մասնակցում: ՔՊ-ական պատգամավորներից շատերն անգամ տեղյակ էլ չէին, որ նիստ ունեն: Դա, թերեւս, խորհրդարանական աշխատանքի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի ու խմբակցության ղեկավարության աշխատեալոճի մասին է վկայում:



Դեկտեմբերի 6-ից նախատեսվող ԱԺ հերթական քառօրյայի ընթացում ՀՀ գլխավոր դատախազը կգնա խորհրդարան. այս մասին տեղեկացնում են «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՀՀ դատախազության իրազեկ աղբյուրները: Առաջին պատգամավորը «Հայաստան» խմբակցությունից կլինի ղեկավար Սեյրան Օհանյանը, ում կալանքի հարցով դատախազ Աննա Վարդապետյանը կմտնի խորհրդարան: Քաղաքական իշխանությունը որոշում է կայացրել նախ զրկել անձեռնմխելիությունից, ապա նաեւ կալանավորել պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին: Հավելենք, որ ՀՀ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 108 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատախազի «միջնորդագիրը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում», այսինքն՝ արտահերթ նիստով հնարավոր չէ պատգամավորի կալանքի հարցով խորհրդարան մտնել: Քանի որ հերթական նստաշրջանը դեկտեմբերի 6-ից է սկսվում 4 օրով, հետեւաբար նախատեսվում է, որ մյուս ամիս կմտնի դատախազը ԱԺ: Այս տարի այլեւս հերթական նիստեր նախատեսված չեն, մյուս նիստերը կլինեն արդեն փետրվար ամսից: Իշխանության գծագրած սցենարով՝ Վահե Հակոբյանի եւ Արմեն Չարչյանի կալանքի հարցը կձգվի մյուս տարի. եթե այդ ընթացքում նրանք պատգամավորական մանդատից հրաժարվեն, հարցը թերեւս այլ կերպ կփակվի: Ամեն դեպքում, «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ պարզելու, թե Սեյրան Օհանյանը որ գործով է որպես մեղադրյալ ներգրավված: Ըստ հակակոռուպցիոն կոմիտեի՝ «Սեյրան Օհանյանն ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող՝ «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերության գույքի օտարման գործընթացում պաշտոնեական լիազորությունների չարաշահման փաստի առթիվ հարուցված քրեական վարույթի շրջանակում: Նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով գույքի վատնում կատարելու մեջ»: Օհանյանը տարբեր առիթներով ասել է, որ այս գործը շինծու է եւ հիմնազուրկ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը մեղադրանք է առաջադրելու ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանին: Առիթը քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով նրա արած հայտարարություններն են: Ըստ ամենայնի, ԱԱԾ-ն Գեղամ, Մանուկյանին մեղադրանք կառաջադրի ՀՀ քրեական օրենսգրքի 329-ի հոդվածի հատկանիշներով (Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը, անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելը կամ քարոզելը…): Այս հոդվածով նախատեսվում է պատիժ՝ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Հիշեցնենք, որ Գեղամ Մանուկյանը ԱԱԾ-ում հարցաքննվել էր քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով տարվող քրեական գործով, ինչը հենց Մանուկյանը հաստատել էր մեզ հետ զրույցում: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ ԱԱԾ-ում քրդերի՝ Թուրքիայում հայտնվելու առեղծվածային դեպքով քրեական գործ է հարուցվել, եւ բավականին խիստ է դրվել հարցը՝ պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկները հայտնվել Թուրքիայի ուժային կառույցներ մոտ: Հիշեցնենք նաեւ, որ երկու քրդերը Հայաստանում 2021 թվականի օգոստոսի 16-ին ապօրինի հատել էին Արաքս գետով անցնող՝ ՀՀ պահպանվող պետական սահմանը: Այդ արարքի համար ՀՀ վերաքննիչ դատարանը 5 տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտել նրանց, որը պայմանականորեն չէր կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Քուրդ ազատամարտիկներն ազատ էին արձակվել հենց դատական նիստերի դահլիճից: Նրանք, ըստ էության, ազատության մեջ էին 7 ամիս, որից հետո անհասկանալի հանգամանքներում հայտնվել են Թուրքիայում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԴԱՍ ՉԵՆՔ ՔԱՂՈՒՄ

Մարդկային զարգացման կենտրոնի տնօրեն Թեւան Պողոսյանը ցավով է արձանագրում, որ պատերազմներից հետո հայ հասարակությունը որեւէ դաս չի քաղում:

ArmLur.am-ի հետ զրույցում նա նշում է. «Եթե Ադրբեջանն անգամ Ավանի վրա կրակի կամ արկեր գցի, ապա դա, վստահ եմ, Կենտրոնի բնակիչները չեն ընկալելու ու հասկանալու»:

-Պարոն Պողոսյան, այնպիսի տպավորություն է , որ «խաղաղության պայմանագիր» կոչվածը հաստատված իրողություն է, ու բոլորը՝ շարքային քաղաքացիներից մինչեւ խորը վերլուծաբաններ, խոսում են այդ մասին այնպես, որ դա իրողություն է եւ մնում է միայն՝ կիրառության մեջ մտնի: Ի վերջո, հասարակությունը ինչպե՞ս միանգամից համակերպվեց «խաղաղության պայմանագրին». հնարավոր է, որ մի օր պարզվի, որ դա առհասարակ 3-րդ կամ 4-րդ պլան է մղվել կամ ոչ էլ գոյություն ունի:

-Իրականության մեջ ոչ էլ գոյություն ունի. եթե անգամ վաղը ստորագրվի այն, միեւնույնն է, իրականության մեջ գոյություն եւ կյանք չի ունենալու: Այս մասին ասել է նա, ով որ պատրաստվում է ստորագրել մյուս ստորագրած պայմանագրերը, որոնցից են՝ նոյեմբերի 9-ի զինադադարը, հունվարին Ռուսաստանում ստորագրված փաստաթուղթը. ասում են, որ ինչ-որ բան ստորագրել են նաեւ Պրագայում եւ այդ թղթերից ոչ մեկը կյանքի չի կոչվել, եւ այս մեկը եւս բացառություն չի: Այստեղ ցավալին այն է, որ խաղաղության պայմանագիր ասածի մեջ այստեղ խաղաղություն բառի վրա է մանիպուլացիա գնում: Այստեղ Ադրբեջանը խաղաղություն բառի տակ մի բան է ընկալում, սակայն մենք լրիվ այլ բան ենք ընկալում եւ հասկանում: Ցավոք սրտի, դա մեր այն բացերից է, որ գալիս է 94-ից ի վեր, երբ որ այդ զինադադարը մեզ որպես խաղաղություն ներկայացրեցին: 2012 թվականից ի վեր ես, լինելով Ազգային ժողովում, ամեն անգամ հանրային խոսք ասելիս ասում էի, որ մեր պատերազմը չի ավարտվել, եւ մենք պետք է ապրենք պատերազմական մտածելակերպի մեջ, մենք չպետք է մտածենք, որ զինադադարը խաղաղություն է: Ցավոք սրտի, միգուցե եւ մեղքը իմ մեջ է, եւ ես չեմ կարողացել մարդկանց ճիշտ բացատրել, եւ դա չի ձեւավորվել մարդկանց մտածելակերպի մեջ, որ դա զինադադար է, այլ ոչ թե խաղաղություն:

-Արդյոք 44-օրյա պատերազմից հետո ինչ-որ բան փոխվե՞ց մարդկանց մտածելակերպի մեջ:

-Ոչինչ չփոխվեց. Ադրբեջանը դարձյալ չկրակեց եւ մարդիկ մտածեցին, որ դա խաղաղություն է: Մարդկանց մոտ ընկալում էր, որ դա Արցախի տարածքն է, եւ Ադրբեջանը օկուպացրել է արցախյան տարածքները, սակայն ինչպե՞ս կբացատրեն Ջերմուկի դեպքը:

-Ձեր կարծիքով՝ պետք է կրակե՞ն Երեւանում, որպեսզի մարդիկ գիտակցեն:

-Ցավոք սրտի, անգամ եթե Ավանում կրակեն, չեմ կարծում՝ Կենտրոնը այդ իրավիճակը կգիտակցի, եւ չգիտակցելու պահը այսօր մեր ամենամեծ ճգնաժամն է: Հայրենիքի պաշտպանությունը մեր մոտ այլ կերպ է ձեւավորված. մեր պատկերացման մեջ ձեւավորված է, որ, այո, թող լինի պաշտպանություն, բայց դա ցավ չպատճառի ինձ, իմ մարմնին, եւ արթնանամ, ոչինչ չլսեմ: Ամեն առավոտ բոլորս կարդում ենք, որ սահմանին կա կրակոցներ, սակայն չենք գիտակցում, որ դա պարերազմի տրամաբանություն է: Իրականում չկա խաղաղություն, եւ չկա աշխարհաքաղաքական ընկալումների մեջ այն երաշխավորը, որ կարող է ապահովել այդ խաղաղությունը, քանի որ բազմաթիվ խոշոր պետություններ պայմանագրեր են ստորագրում եւ հաջորդ իսկ րոպեին չեղարկում: Ես միայն մի բանում եմ վստահ. այս խաղաղությունը կարող է ապահովել միայն հայկական բանակը, որը պետք է սնվի միասնությամբ աշխարհով մեկ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. ««ԿԱՏԱՐԻՆԵ համայնք կամրջողներ» (Katarine program/ «Կատարինե» կանանց քաղաքական առաջնորդության ծրագիր) ծրագրի շրջանակներում հանդիպում ունեցա Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Ճամբարակի ակտիվ կանանց հետ:

Խոսեցինք համայնքային խնդիրների եւ հնարավորությունների մասին՝ քննարկելով մի շարք հարցեր, մասնավորապես՝

-ինչպե՞ս Ճամբարակն ու հարակից բնակավայրերը դարձնել տուրիստական գրավիչ գոտի,

-ի՞նչ անել, որ Ճամբարակը «չծերանա». երիտասարդներն ապրեն ու արարեն իրենց ծննդավայրում,

-ինչպե՞ս խթանել այնտեղ բիզնեսի զարգացմանը:

Սահմանամերձ բնակավայրի կանանց վճռական տրամադրվածությունն ինձ ոգեւորեց:

Ի գո՛րծ...»:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Օրերս «Ժողովուրդ» օրաթերթը «Արցախը՝ անկլավ դառնալու ռիսկի տակ» վերտառությամբ լուր էր հրապարկել: Լուրի բովանդակությունը մասնավորապես այն էր, որ «Ադրբեջանը մի օր պարզապես կարող է փակել Հայաստանն Արցախին կապող միջանցքը, քանի որ այդպիսի շանտաժներ արվում են պարբերաբար»:

Հարցի առնչությամբ ArmLur.am-ն Արցախի նախագահի գրասենյակի հետ կապ հաստատեց՝ ճշտելու համար, թե Արցախի նախագահականն այս հարցի առնչությամբ ինչ դիտարկումներ ունի: Մեզ հետ զրույցում Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի մամուլի քարտուղար Լուսինե Ավանեսյանն ասաց. «Արցախում վերլուծում են Ադրբեջանի քայլերը քաղաքական դաշտում եւ շփման գծում: Հնարավոր սրացումները կանխելու նպատակով ԱՀ իրավասու կառույցները ամենօրյա կապի մեջ են Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորակազմի հրամանատարության հետ, որի վերահսկողությանը Արցախը Հայաստանին կապող միջանցքը հանձնված է 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ»:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԹԱՓՈՒՐ Է

Կարեն Անդրեասյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ դառնալուց հետո արդարադատության նախարարի պաշտոնում առ այսօր որեւէ մեկը չի նշանակվել: Իհարկե, պաշտոնակատար կա՝ Գրիգոր Մինասյանը, բայց արդեն քանի ամիս է՝ վարչապետը ո՛չ նրան, ո՛չ էլ մեկ ուրիշի նախարար չի նշանակում: ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում այդ հարցի մասով առ այսօր կոնսեսուս չկա: Մի մասը կողմ է, բայց մի մասն էլ դեմ է Մինասյանի՝ նախարար նշանակվելուն: Չգիտես՝ ինչու, այս հարցում նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է հապաղում. սովորաբար նման դեպքերում նա անձամբ է որոշում՝ ում որտեղ ինչ նշանակի՝ իհարկե, սեփական թիմին հիշատակելով ու թիմակիցների հետ իբրեւ թե ունեցած քննարկումներին հղում անելով: Հարցը նաեւ նախարարության աշխատակիցներին է անհանգստացնում, որ ճամպրուկային տրամադրությամբ սպասում են՝ ի վերջո կնշանակվի Մինասյանը, թե ոչ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՕՐԵՆՔՈՒՄ

Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Բաբկեն Թունյանն առաջարկում է փոփոխել «Անկանխիկ գործառույթների» մասին օրենքն ու զբոսաշրջիկներին թույլ տալ սահմանված շեմից դուրս կանխիկով գնումներ անել:

Բանն այն է, որ այս տարվա հուլիսին ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի տարածքում 300 հազար եւ ավելի գնումների դեպքում վճարումը պետք է անկանխիկ եղանակով կատարել: Այժմ, փաստորեն, պատգամավորն առաջարկում է վերանայել այն ու թույլ տալ հատկապես օդանավակայաններում առեւտուր անող զբոսաշրջիկներին կանխիկ վճարել:

Ըստ նախագծի հիմնավորման՝ Հայաստան այցելող ու Հայաստանից մեկնող զբոսաշրջիկները երբեմն դժվարություններ են ունենում անմաքս առեւտրի խանութներում (դյութի ֆրի)՝ 300.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների ձեռք բերման ժամանակ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու պարտադիր պահանջի ապահովման հետ կապված: «Համաձայն «Զվարթնոց» եւ «Շիրակ» միջազգային օդանավակայաններում շահագործվող անմաքս առեւտրի խանութներից ստացված տեղեկատվության, անկանխիկի մասին օրենքի՝ ուժի մեջ մտնելուն նախորդած 1 տարվա ընթացքում կատարվել է մոտ 300 մլն դրամի առեւտուր, որոնց դեպքում կտրոնների արժեքը գերազանցել է 300 հազար դրամը: Այդ գումարից ավելի քան 80 տոկոսը հայկական ապրանքներ են, հիմնականում՝ թանկարժեք ալկոհոլային խմիչքներ: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո նման գործարքների քանակը եւ ծավալը անգամներով նվազել է»,- ասվում է նախագծում: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ օրենսդիրն առաջարկում է վերանայել արդեն իսկ գործող օրենքն ու զբոսաշրջիկների համար որոշակի «արտոնություն» սահմանել:

Հարցն, ի դեպ, այսօր խորհրդարանի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում է քննարկվելու:

ԱՆՓՈՒՅԹ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» թափոնաջրերը շարունակում են առատորեն աղտոտել Ողջի գետն ու պոչամբարի հարակից բնակավայրերը: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել այն մասին, որ բոլորովին վերջերս կոմբինատին պատկանող «Արծվանիկի» պոչամբարի թափոնաջրերն ու պոչանքները ոչ միայն Աճանան վտակ, այնուհետ՝ Ողջի գետ, այլ նաեւ հարակից բնակավայրեր են հասել, աղտոտել միջավայրն ու վնասել գյուղացիական տնտեսությունները: Աշխարհագետ Լեւոն Գալստյանը, որ «Արծվանիկի» պոչամբարի խնդիրներին ու նրա հասցրած վնասներին քաջատեղյակ է, ասում է, որ պոչամբարից թափոնների արտահոսք միշտ է եղել ու կա նաեւ այժմ: Բացատրում է. «Բանն այն է, որ պոչամբար հասնող պոչանքների կարծր հատվածը նստվածք է տալիս, մնում պոչամբարում, հեղուկ զանգվածը դեպի Աճանան է հոսում: Եվ եթե ուշադիր նայեք, ապա վտակի գույնն անգամ տարբեր է՝ մինչեւ պոչամբար մաքուր, պոչամբարից հետո՝ արծաթագույն, եւ դա՝ դեռ անզեն աչքով: Չնայած ՋՊՄԿ-ից հավաստիացնում են, թե իրենք համապատասխան մարմնից սահմանված չափի արտանետումների թույլտվություն ունեն, բայց մի շարք դեպքեր են եղել, երբ լաբորատոր քննություն է կատարվել, ու պարզվել է՝ ծանր ու վնասակար մետաղներով հարուստ կեղտաջրերը գերազանցում են սահմանված թույլատրելի կոնցետրացիաները: Իհարկե, նաեւ վթարներ են լինում, պոչանքը դեպի պոչամբար տանող խողովակներն են պայթում, վնասվում, ծակվում, ու դա էլ իր հերթին է հավելյալ աղտոտում միջավայրը: Այն, որ այդ պոչամբարից ամենօրյա ռեժիմով Աճանան վտակ, այնուհետ՝ Ողջի, տարբեր քանակի պոչանքային ջրեր են լցվում, փաստ է»:

Ինչ վերաբերում է լիազոր մարմնին՝ Բնապահպանական եւ ընդերքի տեսչությանը, ապա կառույցից նախ լսեցին մեր հարցը, խոստացան մինչեւ օրվա ավարտ պատասխանել, ապա աշխատանքային ժամի ավարտին մոտ խնդրեցին գրավոր հարցում ուղարկել: Իհարկե, մենք դա չարեցինք ու չենք էլ պատաստվում անել, քանի որ բնապահպանությունը կարեւորող գերատեսչությունը ոչ թե գրավոր հարցումների հետեւից պետք է ընկնի ու մի քանի օր անց միայն պատասխանի՝ ինչ է կատարվել կամ կատարվում, այլ հենց նույն պահին գնա ահազանգի հետեւից, պարզի եղելությունն ու կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկի: Տեսչական մարմնի՝ մեզ տված արձագանքն, ի դեպ, այդ կառույցի աշխատելաոճի, իսկ իրականում պարապուրդի մատնված վիճակի մասին է վկայում: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ շրջակա միջավայի նախարար Հակոբ Սիմիդյանին, ապա պետք է նկատել, որ նրան ու իր թիմին հետաքրքրում էր պղնձամոլիբդենային կոմբինատը, մինչեւ իր ընկերները տեղավորվեցին այնտեղ աշխատանքի, հիմա էլ բնապահպանական խնդիրները չեն մտահոգում: Դեռ կանդրադառնանք պղնձամոլիբդենային կոմբինատի վնասարար գործունեությանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քաղաքական, տնտեսական եւ տեխնոլոգիական արագ վերափոխումների պայմաններում ձեւավորվող նոր աշխարհակարգում Հայաստանը եւ Հնդկաստանը ավելի, քան երբեւէ, միմյանց կարիքն ունեն, ուստի անհրաժեշտ է գտնել երկկողմ հարաբերությունների զարգացման նոր մոդելներ, մշակել ուղիներ ավելի ընդլայնելու համատեղ օրակարգը եւ համակարգելու գործողությունները բոլոր հնարավոր հարթակներում եւ ոլորտներում՝ աղահովելով փոխադարձ բարգավաճումը եւ խաղաղությունը:

Նման կարծիքի էին նոյեմբերի 28-ին տեղի ունեցած «Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերությունների նոր խթաններ» խորագրով առաջին միջազգային գիտաժողովի բանախոսները: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանի խոսքով՝ Հնդկաստանը միշտ եղել է հայ ժողովրդի մեծագույն բարեկամը, եւ դրա լավագույն վկայությունն օրեցօր աճող եւ զարգացող փոխշահավետ համագործակցությունն է տարբեր ոլորտներում: ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների ու ժողովուրդների միջեւ դարերի խորքից եկող ավանդական ջերմ հարաբերություններն ու փոխադարձ աջակցությունը շարունակում է ամրապնդվել, իսկ միջպետական փոխանակումներն ու կապերն ընդլայնվել ու խորացել են: «Այս առումով պետք է փաստել, որ հատկապես վերջին տարիներին մեծ աշխատանք է իրականացվել մեր երկկողմ համագործակցության զարգացման ուղղությամբ: Տեղի են ունեցել բարձրաստիճան այցելություններ եւ հանդիպումներ: Մենք ակտիվ համագործակցում ենք միջազգային կառույցներում: Երկու երկրներում կազմակերպվել են գործարար համաժողովներ, հանդիպումներ, նախաձեռնվել են նոր համատեղ ծրագրեր բազմաթիվ ոլորտներում»- ասաց Սաֆարյանը: Արտաքին գործերի նախարարի տեղակալը հայտնեց, որ վերջին ժամանակահատվածում ակտիվ աշխատանք է իրականացվել Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ այնպիսի առանցքային ոլորտներում համագործակցության ձեւավորման ուղղությամբ, ինչպիսիք են պաշտպանական ոլորտը եւ տարածաշրջանային անվտանգությունը, միջազգային տրանսպորտն ու հաղորդակցությունը, զբոսաշրջությունն ու միջմարդկային փոխանակումները, առեւտուրը, գյուղատնտեսությունը ու գիտությունը, առողջապահությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաները: Դիվանագետի կարծիքով՝ դեռեւս կա հսկայական չօգտագործված ներուժ տնտեսական հարաբերությունները, առեւտուրը, զարգացնելու, ներդրումային հնարավորություններն օգտագործելու, մարդկանց միջեւ կապերն ակտիվացնելու ուղղությամբ:

«Հայաստանն իրապես կարող է օգտվել Հնդկաստանի արագ առաջընթացից պաշտպանունակությունը բարձրացնելու եւ տնտեսությունը զարգացնելու համար: Միջազգային առեւտրի եւ փոխադրումների ուղիների եւ հնարավորությունների արագ փոփոխման պայմաններում պետք է մտածել դեպի հարավ ներմուծման եւ արտահանման զարգացման ուղղությամբ: Այս առումով մենք դեռ շատ անելիքներ ունենք առաջիկայում: Հարկ է նշել, որ պետական գերատեսչությունների եւ մասնավոր ընկերությունների մակարդակում տարվող աշխատանքը չի կարող ամբողջովին ապահովել Հնդկաստանի նման երկրի հետ հարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ ինտենսիվությունները եւ այս առումով, կարծում եմ, որ պետք է աշխատանքներ տանեն նաեւ մեր հասարակության առավել լայն շրջանակները: Վստահ եմ, որ այսօրվա գիտաժողովի օգնությամբ հնարավոր կլինի իրապես ավելի լավ ճանաչել իրար, ձեւավորել մեր փոխադարձ ակնկալիքները»,- եզրափակեց Սաֆարյանը:

Գիտաժողովը ներառել է չորս թեմատիկ հարթակներ: Առաջինը՝ «Պատմական կապեր, Դարերի երկարատեւ փոխգործակցություն», որի ընթացքում բանախոսները անդրադարձել են անցյալի փորձի եւ ընդհանուր արժեքների գործնական նշանակությանը եւ արտացոլմանը կայուն ներկայի կառուցման եւ կենսունակ ապագայի ապահովման գործում: Երկրորդը՝ «Հայաստանն ու Հնդկաստանը՝ գլոբալ եւ տարածաշրջանային զարգացումների շրջանակներում», որի ընթացքում բանախոսները ներկայացնել են իրենց տեսակետները եւ մոտեցումներն աշխարհակարգի համակարգային տեղաշարժերի ազդեցության տակ ձեւավորող միջազգային հարաբերությունների նոր վեկտորների եւ հեռանկարների, ինչպես նաեւ համապատասխան գլոբալ եւ տարածաշրջանային համագործակցության եւ գործընկերությունների վերագնահատման եւ փոփոխման անհրաժեշտության վերաբերյալ: Երրորդը՝ «Ճկուն բարեկամություն փոփոխվող աշխարհաքաղաքականության մեջ, Հայաստան-Հնդկաստան երկկողմ հարաբերություններ», որի ընթացքում բանախոսները անդրադարձել են վերջին տասնամյակի արագ զարգացումների արդյունքում Հայաստանի եւ Հնդկաստանի առջեւ ծառացող նոր ռիսկերին եւ մարտահրավերներին, ինչպես նաեւ զուգահեռաբար բացվող կայուն եւ փոխշահավետ համագործակցության հետագա զարգացման համար նոր հնարավորությունները լավագույնս օգտագործելու խնդիրներին, մասնավորապես՝նոր հանգամանքներում Հյուսիս-Հարավ բազմաշերտ համագործակցության ընդլայնման եւ դրա հարատեւության հարցին: Չորրորդը՝ «Բազմաչափ երկկողմանի համագործակցության հեռանկարները», որի ընթացքում բանախոսները ներկայացրել են իրենց գնահատականներն ընթացող երկկողմ համագործակցությանը մշակութային առեւտրատնտեսական, անվտանգության, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտներում, ինչպես նաեւ կանդրադառնան համագործակցության խորացման եւ դիվերսիֆիկացման հեռանկարներին:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 28-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ անցկացվել է աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցել է ՀՀ ՊՆ, ԶՈՒ եւ ԶՈՒ ԳՇ ղեկավար կազմը, բանակային զորամիավորումների հրամանատարական կազմը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են զինված ուժերում իրականացվող աշխատանքների, մասնավորապես՝ ձմեռային փուլի նախապատրաստական միջոցառումների, ինժեներական եւ թիկունքային ապահովման հետ կապված մի շարք հարցեր:Նախարարին զեկուցվել են նախորդիվ անցկացված աշխատանքային խորհրդակցությունների ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքը: Բարձրացված խնդիրների առնչությամբ պաշտպանության նախարարը համապատասխան ցուցումներ եւ հանձնարարականներ է տվել պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին:

ՓԱՐԻԶ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը Ֆրանսիայի մրցակցային մարմնի ղեկավար Բենուա Կյուրեի հրավերով աշխատանքային այցով մեկնել է Փարիզ: Այցի շրջանակում տեղի կունենա երկու երկրների մրցակցային մարմինների ղեկավարների երկկողմ հանդիպումը, որի ընթացքում կքննարկվեն համագործակցության զարգացմանն ուղղված երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Հանձնաժողովի նախագահը կմասնակցի նաեւ դեկտեմբերի 1-ից 2-ը Փարիզում կայանալիք Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով 21-րդ համաշխարհային համաժողովին: Համաժողովն անցկացվում է «Մրցակցության քաղաքականության նպատակները» խորագրի ներքո, որին մասնակցելու են ՏՀԶԿ (OECD) անդամ եւ մի շարք այլ երկրների մրցակցային մարմինների ղեկավարներ:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՐԳԵԼՈՒՄ Է

Ադրբեջանի ՊՆ-ն խնդրում է Արցախում առաքելություն իրականացնող ռուս խաղաղապահներին չօգտագործել «Լեռնային Ղարաբաղ» անվանումը: Այս մասին իր սոցիալական ցանցի էջում հիշեցրել է ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը՝նշելով, որ Ադրբեջանը պետք է հիշի, որ 2 տարի առաջ իրենց նախագահ Ալիեւը ստորագրել է եռակողմ հրադադարի պայմանագիր, որտեղ 5 անգամ նշվում է «Լեռնային Ղարաբաղ» տերմինը:

«Դա Ռուսաստանի օրինական հիմքն է՝ օգտագործել Լեռնային Ղարաբաղ անվանումը»,-գրել է Մարուքյանը:

3 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՄԱՀՎԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

3 տարի առաջ՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ին, Մոսկվայում կասկածելի հանգամանքներում մահացավ «Մարտի 1»-ի գործով վկա, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության նախկին պետ Աշոտ Կարապետյանը: Մինչ օրս առեղծված է մնում նրա մահը: Բանն այն, որ 2019 թվականին կասկածելի հանգամանքներում մահանում էին «Մարտի 1»-ի գործով անցնող անձինք:

Աշոտ Կարապետյանի մահվանից երկու ամիս առաջ էլ հայտնաբերվել էր 2003-2008 թվականներին Հայաստանի ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հայկ Հարությունյանի դին՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքով: Ոստիկանության նախնական վարկածով՝ տեղի ունեցածն ինքնասպանություն էր: Հարությունյանը եւս «Մարտի 1»-ի գործով վկայի կարգավիճակ ուներ: Մինչ օրս նրա մահը եւս մնում է առեղծված: Հիշեցնենք, որ 2019 թվականի նոյեմբերի 28-ին հայտնի դարձավ որ Ռուսաստանում մահացել է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության նախկին պետ Աշոտ Կարապետյանը: Ըստ ռուսական լրատվամիջոցների հաղորդումների՝ ոստիկանության նախկին պաշտոնյայի մահը վրա է հասել Պյատիգորսկում՝ մասնավոր գարեջրի գործարանում, գազի պայթյունի հետեւանքով: Ըստ տեղեկությունների՝ պայթյունի հետեւանքով մահացել է նաեւ ոստիկանության նախկին բարձրաստիճան պաշտոնյայի մորեղբայրը: Ռուսաստանում երկու մարդկանց մահվան առթիվ քրեական գործ էր հարուցվել՝ աշխատանքային պահանջները չբավարարելու հատկանիշներով: Ռուսական լրատվամիջոցները հաղորդում էին , որ գարեջրի գործարանը գազի ցանցին միանալու թույլտվություն չի ունեցել: 49-ամյա Կարապետյանը ոստիկանության համակարգում աշխատել է 1990-ականներից, 2008 թվականի մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ էլ զբաղեցրել է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության խորհրդային բաժնի պետի պաշտոնը: Հետընտրական արյունալի իրադարձություններից մեկ տարի անց պարգեւատրվել է «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեդալով: Հատուկ քննչական ծառայությունից հայտնել էին, որ Կարապետյանը «Մարտի 1»-ի քրեական գործում վկայի կարգավիճակ ուներ: «Մարտի 1»-ի գործով տուժողի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը նշել էր, որ Աշոտ Կարապետյանը հետընտրական իրադարձություններին իր մասնակցությունն է ունեցել. «2008թ. փետրվարի 29-ի միջոցառում կոչված «տեղանքի զննություն» օպերացիան եւ դրա ամբողջ գիշերվա ընթացակարգի հետ Աշոտ Կարապետյանն առնչություն ուներ. նա էր զանգել Արմեն Նիկողոսյանին, կանչել ոստիկանություն, այնուհետեւ ոստիկանությունում, մենք գիտենք, ինչ իրավիճակ է եղել այդ ժամանակ՝ զենքերի հետ կապված, օպերացիան իրագործելու հետ կապված, եւ ժողովրդի դեմ նախահարձակ լինելու հիմքեր ստեղծելու հանգամանքներին վերաբերող քննարկումները եւ բուն դրա իրագործումն է: Որպես ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյա՝ նա եւս առնչվել է այն ամենին, ինչ որ առավոտվա գործողություններում առկա են եղել ոստիկանության բիրտ ուժի կիրառման ժամանակ»,- ասել էր նա:

«Մարտի 1»-ի գործով տուժողի ներկայացուցչի գնահատմամբ՝ Կարապետյանը «Մարտի 1»-ի գործով պիտի հարցաքննվեր: Ըստ նրա՝ չի կարող ասել՝ Կարապետյանի մահը կապ ուներ այս իրադարձությունների հետ, թե ոչ. «Չեմ էլ ուզում բացառել այն վարկածը, որ կարող է եւ կապ ունենալ, որովհետեւ զարմանալի զուգադիպությամբ բոլոր այն անձինք, ովքեր մարտի 1-ի առանցքային գործողությունների կիզակետում եղել են, այս անձինք կամ ինքնասպան են լինում, կամ մահանում եմ, եւ ինչ-որ բան նորմալ չեմ համարում այս ամենի մեջ»:

Ի դեպ, Կարապետյանը հանրության ուշադրության կենտրոնում էր հայտնվել հատկապես ընդդիմադիր Գրիշա Վիրաբյանի գործի շրջանակներում: Վիրաբյանը հայտարարել էր, որ 2004-ին ընդդիմադիր ցույցերին մասնակցելու համար իրեն խոշտանգողների շարքում է եղել նաեւ Աշոտ Կարապետյանը, որն այն ժամանակ Արարատի մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալի պաշտոնն էր զբաղեցնում: Կարապետյանի անունը շոշափվել էր նաեւ Եվրադատարանի՝ 2012 թվականի վճռում, որով ՄԻԵԴ-ը Հայաստանին պարտավորեցրել էր 31 հազար եվրոյի փոխհատուցում վճարել:

2016 թվականին՝ Ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքը «Սասնա ծռեր» զինված խմբի կողմից գրավելու օրերին՝ Երեւանում մեկնարկած հանրահավաքներից հետո, Կարապետյանը ենթարկվել էր կարգապահական տույժի, ապա ազատվել Երեւանի ոստիկանապետի պաշտոնից: Այդ օրերին ոստիկանությունը հատուկ միջոցներ էր կիրառել ցուցարարների եւ լրագրողների նկատմամբ, տասնյակ մարդիկ վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՀԱՄԱՐՍՈՒՌ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պեմզաշենում նոյեմբերի 9-ին տեղի ունեցած ողբերգական դեպքը դեռ շարունակում է հասարակության մոտ բազմաթիվ հարցեր առաջ քաշել, թե ինչպես կարող էր գողության նպատակով տուն մտած տղամարդը 12-մյա աղջկան սեռական բռնության ենթարկել ու դաժանաբար սպանել երկու երեխաներին ու նրանց մորը: Սակայն մինչ հասարակությունը քննարկում ու տարբեր հարցեր է առաջ քաշում այս ողբերգական դեպքով, իրավապահ համակարգում նմանօրինակ շատ այլ սարսափելի դեպքեր են բացահայտվում: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ այս տարվա հոկտեմբերի 11-ին դատարան է ուղարկվել մեկ քրեական գործ, որտեղ հայրն իր սեփական երեխաներին է բռնաբարել: Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանի դատախազությունը Երեւան քաղաքի դատարան է ուղարկել քաղաքացի Կ. Մնացականյանի մասով քրեական վարույթը:

Ըստ նախաքննական մարմնի՝ Կ. Մնացականյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա բռնաբարել եւ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել իր անչափահաս 2 երեխաների նկատմամբ

Նա կալանավորված է: Գործը մակագրվել է դատավոր Կ. Ֆարխոյանին:

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ԱԶԳԱԿԱՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեն Պեմզաշենի ողբերգական դեպքով հարցաքննել է Վրույր Բարսեղյանի հորաքրոջը՝ Ռուզաննա Խաչատրյանին: Ըստ լուրերի՝ Ռուզաննա Խաչատրյանը դաժան սպանությունից հետո փորձել է մաքրել հետքերը եւ դեռ ավելին՝ նախկինում ազատազրկման է դատապարտված եղել մանկահասակ երեխայի սպանության համար:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինը կնոջ վերաբերյալ դեռեւս որեւէ տվյալ չունի ստացված, որ վերջինս օժանդակել կամ որեւէ կերպ օգնել է հանցագործություն թաքցնելուն, հետքեր վերացնելուն:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին արտակարգ ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի Պեմզաշեն գյուղի տներից մեկում: Տան բնակիչները չէին արձագանքել դռան թակոցներին, իրավապահների ներկայությամբ դուռը բացելուց հետո հատակին 3 դի էր հայտնաբերվել՝ տան բնակիչներ Զարինե Մելիքսեթյանը, նրա դուստր Կարինե Մելիքսեթյանը եւ նրա 8-ամյա որդին: Մի քանի օր շարունակ իրավապահները չէին կարողանում բացահայտել, թե ովքեր են ոճրագործները, որոնք դաժան կերպով սպանել էին տան անդամներին, սակայն նոյեմբերի 12-ին ենթադրյալ հանցագործություն կատարածները հայտնաբերվեցին, եւ նրանցից մեկը՝ Վրույր Բարսեղյանը, խոստովանել է, իսկ, ահա, Արկադի Բարսեղյանը չի ընդունում մեղադրանքը: Քրեական վարույթով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ

3 ամիս է անցել, սակայն մինչ օրս նախաքննական մարմինը չի կարողանում բացահայտել, թե ով է այն տղամարդը, որը պայթուցիկ էր դրել Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հորը՝Զարեհ Սարգսյանին պատկանող, Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ տարածքի տեսախցիկներն արձանագրել են, թե ինչպես է մեկ տաղամարդ մոտենում տարածքի խոնութներին, ձեռքում գտնվող սարքը տեղադրում է խանութներից մեկի մոտ եւ հեռանում: Ավելի ուշ կրկին գալիս է նույն տարածք, սարքը վերցնում եւ բերում տեղադրում է Սարգսյանին պատկանող, Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում: Ի դեպ, այդ գործողությունները կատարվում են լուսադեմին՝ ժամը 4:00-ի սահմաններում, որից հետո հեռանում է, եւ սարքը մեկ ժամ հետո՝5-ին, պայթում է: Նախաքննական մարմինը գիտի, որ կատարողը եղել է մեկ անձ, եւ տեսախցիկները ցույց են տալիս, թե նա որտեղից է գալիս ու ուր է գնում, սակայն մինչ օրս նրան չեն հայտնաբերել: Ի դեպ, գրել էինք, որ ԱԺ պատգամավորի հայրը՝Զարեհ Սարգսյանը, իրավապահներին բացատրություն է տվել Արաբկիրում տեղի ունեցած պայթյունի գործով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին հայտնել է, որ չի կարող ասել՝ արդյոք կատարվածն իրենց հետ կապ ունի, թե ոչ: «Թող իրավապահները պարզեն»,- ասել է Զարեհ Սարգսյանը: Նկատենք, որ պայթյունը եղել էր օգոստոսի 31-ին Հայկ Սարգսյանին պատկանող, Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում: Այդ տարածքից փոքր-ինչ հեռավորության վրա է գտնվում պատգամավորի հայրական տունը, ու համադրելով բոլոր հանգամանքները՝ հարց է առաջանում՝ պայթյունն ուղղակի պատահականությո՞ւն է եղել, թե՞ ՔՊ-ական պագամավորի դեմ է ուղղված. գուցե մարդիկ կան, որոնք փորձել են ինչ-որ բան հասկացնել պատգամավորին կամ նրա ընտանիքի անդամներից որեւէ մեկին: Բոլոր հանգամանքները, հուսանք, իրավապահները կպարզեն:

ՄԵԿ ԱՆՁ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ռոման Դավթյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 26.07.2022 թվականին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Տավուշի մարզի Գետահովիտ բնակավայրի բնակիչ Մաթեւոս Ուլիխանյանի հետ սահմանված կարգի խախտմամբ՝ անտեսելով տվյալ օրվա հսկիչ անցագրային կետի հերթապահի պահանջը զորամասի տարածք մուտք չգործելու վերաբերյալ, նորակոչիկի տեսակցելու նպատակով առանց համապատասխան թույլտվության, ապօրինի մուտք է գործել ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի տարածք:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 25-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 95 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

2022 թվականի հոկտեմբերի 5-ին Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշում է ընդունել Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի տնօրեն Հովիկ Պետրոսյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին: Որպես որոշման հիմք՝նշված է աշխատանքից ազատվելու մասին Հ. Պետրոսյանի դիմումը: Հ. Պետրոսյանին պաշտոնից ազատելու մասին համայնքի ղեկավարի որոշումը նախկինում տեղադրված էր Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային պաշտոնական կայքում, սակայն այժմ որոշումն այնտեղ չկա. այն համայնքապետարանի ինտերնետային կայքից հեռացրել են: Հ. Պետրոսյանը 58 տարեկան է, թառ է նվագում, ունի բարձրագույն կրթություն, ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի բաժինը: Նա իր բարեխիղճ աշխատանքի, համեստ բնավորության պատճառով Դիլիջան քաղաքի բնակիչների շրջանում արժանի կերպով հարգանք է վայելում: Հ. Պետրոսյանը 29 տարի ղեկավարել է Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցը, 20 տարի առաջ հիմնել է երաժշտական այդ դպրոցի Հաղարծին գյուղի մասնաճյուղը: Հ. Աբովյանը նվիրված էր իր գործին, նա պաշտոնից ազատվել է համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի ճնշումների հետեւանքով: Այդ մասին լրագրողիս հայտնեց Հ. Պետրոսյանի հարազատը, որը խնդրեց չհրապարակել իր անունը: Հ. Պետրոսյանը չի կարողացել դիմակայել համայնքի ղեկավարի ճնշումներին՝մտածելով, որ նա Դիլիջան խոշոր համայնքի ղեկավարն է, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կառույցի ղեկավարը, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից համայնքի ղեկավար նշանակված անձ, որի դեմ իր իրավունքները պաշտպանելը, պայքարելը հաջողություն չի ունենա: Նշեմ, որ Դ. Սարգսյանի՝համայնքի ղեկավար դառնալուց հետո Դիլիջանի համայնքապետարանում կադրային շատ փոփոխություններ են կատարվել, աշխատանքի են տեղավորվել «յուրայիններ»: Դ. Սարգսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի եղբորորդի Սիփան Փաշինյանի մտերիմ ընկերն է: Դիլիջանի քոլեջն ավարտած, ներկայումս Հայաստանի եվրոպական համալսարանում հեռակա կարգով սովորող, 1984 թվականին ծնված Դ. Սարգսյանն իր աճնական գործում իր սեռի վերաբերյալ գրել է՝ արու, ինչը համացանցում մեծ քննարկումների եւ ծաղրանքի առիթ է դարձել: Դ. Սարգսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. փետրվարի 26-ին նշանակվել է Դիլիջան խոշոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջանի համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում ձեւավորված ավագանու կողմից ընտրվել է Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԿՄԱՄՆԱԿՑԻ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի 17-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 3-ը Ռաբաթում (Մարոկկոյի Թագավորություն) կանցկացվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության հարցերով միջկառավարական կոմիտեի 17-րդ նստաշրջանը:

Միջկառավարական կոմիտեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի գլխավոր մարմիններից է. այն ստեղծվել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն: Կոմիտեի կազմում 24 անդամ պետություն է: Կոմիտեի կարեւոր գործառույթներից է անդամ պետությունների ներկայացրած հայտերի առնչությամբ վերջնական որոշում կայացնելը կոնվենցիայով սահմանված ցանկերում գրանցելու նպատակով:

Նստաշրջանին մասնակցում է աշխարհի 125 երկրի ավելի քան 1000 ներկայացուցիչ, այդ թվում՝ կոնվենցիային միացած անդամ երկրների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, դիտորդներ, ինչպես նաեւ տարբեր երկրների լրատվամիջոցներ: Նստաշրջանին մասնակցելու նպատակով Ռաբաթ է մեկնել ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության պատվիրակի տեղակալ Օ. Դավթյանը եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության մշակութային ժառանգության պահպանության եւ հանրահռչակման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Կիլիչյանը:

Նստաշրջանի օրակարգի կարեւոր հարցերից են տարբեր երկրներից գրանցման ներկայացված հայտերի քննարկումները: Ներկայացվել էր 50 հայտ, որից 4-ը՝ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության, 46-ը՝ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերում ընդգրկելու, 5-ը՝ պաշտպանության լավագույն փորձի գրանցամատյանի առաջարկներ, եւ 2 հայտ՝ ոչ նյութական մշակութային ժառանգության հիմնադրամի կողմից անդամ պետություններին տրամադրվող միջազգային աջակցություն ստանալու համար: Հայաստանի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան վավերացրել է 2006 թ. եւ մինչ օրս ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում գրանցել է «Դուդուկն ու իր երաժշտությունը» (2008 թ.), «Հայկական խաչքարի արվեստ. խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը» (2010 թ.), «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսեւորումները» (2012 թ.), «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը եւ մշակութային դրսեւորումները Հայաստանում» (2014 թ.) եւ «Քոչարի. ավանդական խմբապար» տարրերը: ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրվել է «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն հասարակական կազմակերպությունը (2020 թ.), եւ ՅՈՒՆԵՍԿՕ է ներկայացվել «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի կիրարկման եւ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ներառված տարրերի կարգավիճակի վերաբերյալ ՀՀ պարբերական զեկույցը (2021 թ.):

ՄԱՐԶ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ ուսուցիչների կամավոր ատեստավորման եւ դրա արդյունքում աշխատավարձի հավելում ստանալու գործընթացն անվանում են իշխանության կողմից աչքակապություն, որը վիրավորում է ուսուցիչների արժանապատվությունը՝հանրությանը ցույց տալով, որ, իբր, ուսուցիչներն իրենք են մեղավոր իրենց ցածր աշխատավարձի համար, քանզի չեն ցանկանում ատեստավորվել: Ուսուցիչները ասում են, որ այս տարվա ամռանը ուսուցիչների համար հեռավար ձեւով վերապատրաստումներ են անցկացվել, եւ եթե դրանք արդյունավետ են եղել, ինչո՞ւ վերապատրաստում անցած ուսուցիչները ատեստավորման չեն մասնակցում, ինչո՞ւ են վերապատրաստման համար պետական բյուջեից գումարներ ծախսվել: Նրանց խոսքերով՝ատեստավորման քննության հարցաշարը չի հրապարակվել, այդ հարցաշարում բազմաթիվ են «խուճուճ» հարցերը, քննական հարցերը շատ-շատ են, իսկ դրանց պատասխանելու համար տրված ժամանակը՝ քիչ: Աշակերտների, նրանց ծնողների, ծանոթների աչքերում չխայտառակվելու համար նույնիսկ հմուտ եւ բազմափորձ ուսուցիչները գերադասում են ռիսկի չդիմել եւ չմասնակցել ատեստավորման գործընթացին:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿՈՉՆՉԱՑՆԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը նոյեմբերի 22-ին որոշում է ընդունել Տավուշի մարզպետարանի արխիվային փաստաթղթերը փորձագիտությամբ արժեվորելը կազմակերպելու համար ստեղծել նոր հանձնաժողով, ուժը կորցրած համարել Տավուշի մարզպետի՝ արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժեվորման եւ կարգավորման նպատակով 2015թ. մայիսի 18-ի թիվ 14-Ա կարգադրությունը: Ի դեպ, մարզպետ Հ. Ղալումյանի շատ որոշումներ Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում չեն հրապարակվում: Մայիսի 25-ին մարզպետ Հ. Ղալումյանին գրավոր հարցում եմ ուղարկել՝ մասնավորապես հարցնելով, թե պետական բյուջեից Տավուշի մարզպետարանի աշխատողների պարգեւատրումների վերաբերյալ իր կայացրած որոշումները ինչու չեն հրապարակվում Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում:

ԳԱՂՏՆԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Սաթենիկ Ղալեչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թ. մարտ ամսի կեսերին՝ժամը 18:00-ի սահմաններում, մուտքի դուռը հրելու եւ բացելու միջոցով ապօրինի կերպով մուտք է գործել Տավուշի մարզի Բերդ համայնքի Այգեձոր գյուղում գտնվող տուն եւ 1-ին հարկի ընդհանուր սենյակում գտնվող լվացքի մեքենայից գաղտնի հափշտակել է Ժենիկ Մակինյանին պատկանող 800000 ՀՀ դրամ գումարը: Ս. Ղալեչյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 254 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Սույն քրեական գործով դատավարությունն ընթանում է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 49 ՃՏՊ. 12 մարդ զոհվել է, 74-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

Հանրության գերակա շահ կճանաչվեն Տ-8-93, Լծեն-Տաթեւ ավտոճանապարհի մոտ գտնվող տարածքները: Այս մասին որոշման նախագիծը շրջանառության մեջ է դրել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս ծրագրի իրագործումը հնարավորություն կտա շրջանցել Մ-2-Տաթեւ-Աղվանի-Մ-2 ավտոճանապարհի 6կմ երկարությամբ ոլորանները: Օտարվող սեփականության ձեռք բերողն է հանդիսանում ՀՀ-ն, որի անունից հանդես է գալիս ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը: Նշենք, որ սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը 2023 թվականի հունիսի 30-ն է:

Ըստ ՏԿԵՆ-ի՝ ներկայիս ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված՝ Մ-2, Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Գորիս-Կապան տեղամասի առանձին հատվածներում, երթեւեության դժվարություններով պայմանավորված, այլընտրանքային շրջանցիկ ճանապարհ պետք է կառուցվի:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ նաեւ, որ Սյունիքի մարզի Տաթեւ համայնքում գտնվող թվով 106 միավոր հողամասերի որոշ հատվածներ ընդգրկվել են վերակառուցվող ճանապարհ օտարման շերտի սահմաններում:

ԲՆԱԿԱՐԱՆ՝ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ

Ազգային անվտանգության մարմինների 200 ծառայող հնարավորություն կունենա յուրաքանչյուր տարի բնակարան ձեռք բերել՝ մասնակցելով այդ նպատակով անցկացվող վիճակահանությանը: Ազգային անվտանգության ծառայությունն առաջարկում է բնակարանի, բնակելի տան ձեռք բերման կամ բնակելի տան կառուցման պետական աջակցության նպատակային ծրագրի շահառու դարձնել նաեւ ազգային անվտանգության մարմինների ծառայողներին: Ի դեպ, այս նախագծի ընդունումից հետո ՀՀ պետական բյուջեից մոտավոր հաշվարկով յուրաքանչյուր տարի կպահանջվի 741 մլն դրամ: Ներկայումս Ազգային անվտանգության ծառայության բազմաթիվ ծառայողներ ունեն բնակարանային պայմանների բարելավման կարիք, իսկ ՀՀ բանկերի կողմից առաջարկվող հիփոթեքային վարկավորման ոչ մատչելի պայմանների պատճառով նշված խնդրի լուծումը դառնում է անհնար:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը փուլային տարբերակով Պաշտպանության նախարարությունից ընդունելու են հայ-ադրբեջանական պետական ամբողջ սահմանի պահպանությունը, այդ իսկ պատճառով Ազգային անվտանգության ծառայությունը կարիք ունի համալրվելու որակյալ եւ բանիմաց կադրերով՝ գրավիչ դարձնելով ծառայությունն ազգային անվտանգության մարմիններում:

Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 90%-Ը ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչի ժամանակավոր պատասխանատար Ալմազ Բուրկուտովին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամներին:

Մարզպետը իր սոցիալական էջում գրառման մեջ նշել է. «Ինչպես հանդիպման սկզբում նշեց ՄԱԿ ՓԳՀ-ի պատվիրակության ղեկավարը, հանդիպման հիմնական նպատակը ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի եւ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն էր եւ Գեղարքունիքի մարզպետարանի հետ ընթացիկ եւ հետագա համագործակցության հարցերի շուրջ քննարկումը, որոնք հիմնականում վերաբերում էին 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով տեղահանված բնակչության կարիքների գնահատմանն ու աջակցության ցուցաբերմանը:

Միաժամանակ Ալմազ Բուրկուտովը հետաքրքրվեց Գեղարքունիքի մարզում արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պատրաստվածության եւ պատսպարման, մարզի ազդարարման համակարգի գործունեության, տեղահանված բնակչության վերադարձի, նրանց տնտեսություններին պատճառված վնասների վերականգնման հետ կապված հարցերով:

Շնորհակալություն հայտնելով ՄԱԿ-ՓԳՀ-ի պատվիրակությանը Գեղարքունիքի մարզում իրականացված կենսական ու բազմաբովանդակ մարդասիրական ծրագրերի իրականացման համար՝ տրամադրեցի անհրաժեշտ տեղեկատվություն եւ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ շարունակական համագործակցության մասին իմ պատրաստակամությունը հայտնեցի: Նշեցի, որ մեր երախտագիտությունն ենք հայտնում ՄԱԿ ՓԳՀ-ին եւ ՄԱԿ-ի այլ կառույցներին՝ այդ դժվարին օրերին պատերազմական իրավիճակում հայտնված մեր բնակչությանը պահանջված ու կարեւոր օժանդակություն ցուցաբերելու, հույս ու հավատ ներշնչելու եւ բոլոր հիմնահարցերը մշտական ուշադրության կենտրոնում պահելու համար:

Ադրբեջանի կողմից սեպտեմբերյան ագրեսիայի ձեռնարկման առաջին օրերից մինչ այժմ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ մեր համագործակցությունն ընթանում է անխափան, եւ իրականացված ծրագրերն այդ համագործակցության շնորհիվ հասցեական են եւ արդյունավետ: Ինչ վերաբերում է սեպտեմբերի 13-14-ի դեպքերի հետեւանքով տեղահանված բնակչության՝ իրենց բնակավայրեր վերադառնալու հետ կապված խնդիրներին, տեղեկացրեցի, որ ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների շնորհիվ՝ մոտ երկու ամիս է, ինչ սկսվել եւ շարունակվում է հրետակոծությունից վնասված բնակարանների վերականգման գործընթացը, որի արդյունքում տեղահանված բնակչության ավելի քան 90 տոկոսը վերադարձել է մշտական բնակության վայրեր: Խոսքը 152 բնակարանների կամ շինությունների մասին է, որոնց սեփականատերերին տրվել են համապատասխան փոխհատուցումներ վնասները վերականգնելու համար: Բնականաբար, այդ ընտանիքներն ունեն նաեւ այլ կարիքներ ու աջակցության անհրաժեշտություն, որոնք կապված են ձմեռացման, գյուղատնտեսական աշխատանքների եւ շատ այլ խնդիրների հետ, ուստի ամեն մի ծրագիր, որն ուղղվելու է մեր սահմանամերձ բնակավայրերի բնակչության կարիքների եւ կենսական խնդիրների բավարարմանը, մեր կողմից ստանալու է պահանջված աջակցություն ու համագործակցություն՝ լինեն դրանք մարդասիրական, թե անվտանգությանը վերաբերող ծրագրեր:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության, հարցերի լայն շրջանակի բաց քննարկման եւ բավարար տեղեկատվության տրամադրման համար՝ Ալմազ Բուրկուտովն իր հերթին վստահեցրեց, որ իրենք մշտական կապի մեջ կլինեն Գեղարքունիքի մարզպետարանի պատասխանատուների հետ ներդրվող մարդասիրական ծրագրերը հասցեական եւ արդյունավետ իրականացնելու նպատակով:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ 100%-ՈՎ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ

Հայաստանի արդարադատության նախարարությունն առաջարկում է դատախազներին վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 100 տոկոսի չափով: Ըստ պաշտոնական հիմնավորման՝ դատախազների ցածր վարձատրությամբ պայմանավորված՝ դատախազի աշխատանքը կորցրել է գրավչությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս նախագծի ընդունման արդյունքում Հայաստանի պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում փոփոխություն է տեղի ունենալու:

Մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (ընդհանուր 412 անձ) ամսական դրույքաչափի 100 տոկոսի չափով հավելում նախատեսելու դեպքում նախնական հաշվարկով տարեկան կտրվածքով անհրաժեշտ է շուրջ 3 մլրդ 377 մլն 500 հազար դրամ:

Պարզվում է՝ վերջին տարիներին քանակական աճ է արձանագրվել դատախազական գործառույթների անխտիր բոլոր ուղղություններով, եւ դատախազների օրական աշխատաժամանակը շատ հաճախ հասնում է 12-13 ժամի:

Ըստ Արդարադատության նախարարության՝ դատախազների աշխատանքը ոչ միայն գերծանրաբեռնված է, այլեւ նրանց վրա ճնշումները՝ ինչպես զանգվածային լրատվության միջոցներով, այնպես էլ դատավարության մասնակիցների կողմից, այդ աշխատանքը դարձնում են պակաս գրավիչ եւ ռիսկային՝ հաշվի առնելով, որ նոր պաշտոնավարող դատախազի փաստացի աշխատավարձը չի գերազանցում 300 հազար դրամը:

Քիչ չեն երիտասարդ, բուհը նոր ավարտած իրավաբանները, որոնք դատախազի աշխատանքի նկատմամբ մասնագիտական հետաքրքրվածությամբ համալրում են դատախազների շարքերը, բայց ավելի հաճախ են դառնում այն դեպքերը, երբ դատախազության համակարգը համալրելուց եւ 3-4 տարի պաշտոնավարելուց ու մասնագիտական փորձառություն ձեռք բերելուց հետո դատախազները համալրում են փաստաբանական համայնքի շարքերը. ավելի քիչ աշխատանքային ռեսուրսներ ծախսելով՝ որպես փաստաբան աշխատելիս ստանում են դատախազի աշխատավարձը բազմապատիկ անգամ գերազանցող վարձատրություն:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

ՏՂԱՆԵՐԸ ԴԻՐԻԺՈՐԻ ՀԵՏ ՔՈՉԱՐԻ ՊԱՐԵՑԻՆ

«Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ աշխարհահռչակ դիրիժոր Վլադիմիր Սպիվակովի եւ Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի բարեգործական համերգը՝ ի աջակցություն Զինվորի տանը բուժվող տղաների:

Համերգի ավարտին բոլոր ներկաներին եւ հենց Վլադիմիր Սպիվակովին սպասվում էր անակնկալ: Բեմ դուրս եկան Զինվորի տանը պրոթեզավորում ստացած տղաները եւ հայտնի դիրիժորի հետ քոչարի պարեցին:

Վլադիմիր Սպիվակովը համերգի ավարտին պատմեց, որ երբ ամռանը առաջին անգամ եղել է Զինվորի տանն ու տեսել է այն սերն ու ջերմությունը, որ ստանում են տղաները, ու իրենք էլ տալիս են բոլորին, խոստացել է, որ ինքն էլ մինչեւ կյանքի վերջ լինելու է տղաների կողքին եւ աջակցելու է, ինչքան որ կարողանա:

«Ասեմ, որ Հայաստանը վաղուց ինձ համար դարձել է հարազատ տուն: Ես բազմիցս եկել եմ որպես մենակատար եւ դիրիժոր «Մոսկվայի Վիրտուոզների» եւ Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Իմ ընտանիքը միշտ եղել է ձեզ հետ եւ՛ տխրության, եւ՛ ուրախության պահերին: Վերջին տարիներին Հայաստանը դժվար ժամանակներ է ապրում: Ձեր ցավն արտացոլվում է նաեւ իմ սրտում, այդ իսկ պատճառով ինձ համար կարեւոր է աջակցել ձեզ այն ամենով, ինչով կարող եմ: Մենք հանդես կգանք երեք համերգով՝ երկուսը՝ Երեւանում, մեկը՝ ինձ համար շատ նշանակալի քաղաքում՝ Գյումրիում: Այս երեք համերգներից առաջինը Զինվորի տանը բուժվող եւ կյանք վերադարձող վիրավոր զինվորների համար է: Տոմսերի վաճառքից ստացված հասույթը կփոխանցվի Զինվորի տանը»,-ասաց նա:

ԵՊԲՀ ռեկտոր եւ Զինվորի տան համահիմնադիր Արմեն Մուրադյանը շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդի մեծ բարեկամ Վլադիմիր Սպիվակովին կրկին հայ ժողովրդի, իսկ այս անգամ՝ Զինվորի տան կողքին կանգնելու համար:

«Զինվորի տան, բոլոր զինվորների, անձամբ իմ եւ Հայկուհի Մինասյանի անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել մաեստրո Սպիվակովին՝ մարդասիրական նման գեղեցիկ քայլի համար: Կանգնել հայ զինվորի կողքին, սատար լինել նման աստվածահաճո գործին նշանակում է ոչ միայն հայ ժողովրդի մեծ բարեկամը լինել, այլեւ իսկապես մեծ հումանիստ: Պատահական չէ, որ հենց այս բարեգործական համերգով ենք տալիս Զինվորի տան «Armenia 301» ծրագրի մեկնարկը: Սա մի ծրագիր է, որը նպատակ ունի Զինվորի տան շուրջ, այսինքն՝ ի նպաստ զինվորի առողջության եւ բարօրության կատարվող գործի շուրջ համախմբել համայն հայությանն ու հայ ժողովրդի բարեկամներին»,-ասաց Արմեն Մուրադյանը:

Համերգի ընթացքում Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ հնչեցին Պյոտր Չայկովսկիի, Արամ Խաչատրյանի, Ջոակինո Ռոսինիի, Վինչենցո Բելլինիի, Ջակոմո Պուչչինիի, Էռնեստո դե Կուրտիսի ստեղծագործությունները: Որպես մենակատար՝ նվագախմբի հետ հանդես եկավ հայազգի հանրահայտ մեներգչուհի, Բոլշոյ թատրոնի մենակատար Աննա Ագլատովան:

Բարեգործական համերգին ներկա էին նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու նրա տիկինը՝ Աննա Հակոբյանը:

Վլադիմիր Սպիվակովի համերգով նոյեմբերի 27-ից մեկնարկել է Զինվորի տան նոր՝ «Armenia 301» նախագիծը, որի խորհուրդը միասնականությունն է եւ համայն հայության համախմբումը մեկ գաղափարի շուրջ՝ Զինվորի տան շուրջ, որպեսզի հնարավոր լինի շարունակել օգնել, աջակցել, բարեկեցիկ կյանք ու ապագա ապահովել հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորում ստացած անձանց: «Armenia 301» նախագծի հիմքը Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավն է՝ ստեղծագործություն, որ 100 տարի առաջ դարձավ հույսի, հավատի, արեւշատության ու միասնականության խորհրդանիշ եւ ուղերձ՝ դժվարությունների մեջ հայտնված մեր ժողովրդի համար:

Նոյեմբերի 28-ին ունկնդրին կներկայացվեն Ռախմանինովի թիվ 2 դաշնամուրի կոնցերտը եւ Չայկովսկու թիվ 5 սիմֆոնիան: Նվագախմբի հետ որպես մենակատար հանդես կգա միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար Ալեքսանդր Կլյուչկոն: Սպիվակովի այցն ու Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հյուրախաղերն այսքանով չեն սահմանափակվի. Վլադիմիր Սպիվակովին նաեւ Գյումրին է սպասում: Աշխարհահռչակ դիրիժորը Գյումրու համար թանկ հյուր է: Առաջին անգամ նա Գյումրի, այդ օրերին՝ Լենինական, այցելել է 1988-ի աղետից 4 ամիս հետո՝ 1989-ի մարտին, եւ Մոսկվայի վիրտուոզներ նվագախմբի հետ ելույթ ունեցել չավերված ու կանգուն մնացած թատրոնի բեմում:

ԿՅՈՒՅԱԴՐՎԻ

«ԳՅՈՒՂԸ ՈՐ ԿԱՆԳՆԻ» ԿԻՆՈՆԿԱՐԸ՝ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Ռեժիսոր Օֆելյա Հարությունյանի «Գյուղը որ կանգնի» կինոնկարն ընդգրկվել է Բրեստի կարճամետրաժ ֆիլմերի փառատոնի «Աշխարհի կանայք» ծրագրում:

Այս մասին տեղեկացնում է Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

Բրեստի կինոփառատոնը համարվում է կարճամետրաժ ֆիլմերի ֆրանսիական եւ եվրոպական երկրորդ ամենամեծ կինոփառատոնը, որն անցկացվում է ամեն տարվա նոյեմբեր ամսին:

Պետական ֆինանսական աջակցություն ստացած «Գյուղը որ կանգնի» կինոնկարի եւ՛ ռեժիսորը, եւ՛ սցենարի հեղինակն Օֆելյա Հարությունյանն է, պրոդյուսերը Նարե Լեոնե Տեր-Գաբրիելյանն է, համապրոդյուսերը՝ Լիդիա Ինդժովան (Բելգիա): Դերերում՝ Նանոր Պետրոսյան, Լիանա Վարդանյան, Անի Խաչիկյան, Աստղիկ Աբաջյան, Սիրանուշ Բարսեղյան: Արտադրող ընկերությունը՝ «Ֆերմատա ֆիլմ», համաարտադրող երկրներն են Բելգիան, ԱՄՆ-ն, Ֆրանսիան:

ԼՈՒՐԵՐ

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎԵԼ Է

Jaguar X-Type մեքենան, որը պատկանել է Մեծ Բրիտանիայի հանգուցյալ թագուհի Էլիզաբեթ Երկրորդին, աճուրդում վաճառվել է 43 000 ֆունտ ստերլինգով:

Պարբերականը նկատում է, որ տվյալ մոդելը սովորաբար աճուրդում կվաճառվեր անհամեմատ ավելի էժան, սակայն արքայական պատկանելությունը մեծացրել է այս մեքենայի արժեքը, ինչի արդյունքում այն վաճառվել է 7 անգամ ավելի թանկ:

Աճուրդը կազմակերպել է Բերքշիրում գտնվող Historics աճուրդի տունը: Գնորդի ինքնությունն անհայտ է:

Կանաչ մեքենան, որի գույնը հայտնի է որպես Emerald Fire, թագուհուն ծառայել է Վինձորի կալվածքի տարածքով շրջելու համար:

ԴՈՒԲԼԻ ՀԵՂԻՆԱԿ

Գերմանական «Հոֆենհայմի» 31-ամյա հարձակվող Անդրեյ Կրամարիչը պատմության մեջ երկրորդ խորվաթ ֆուտբոլիստն է, որին հաջողվում է դուբլի հեղինակ դառնալ աշխարհի առաջնության եզրափակիչ մրցաշարի խաղում:

Խմբային փուլի երկրորդ տուրում աշխարհի փոխչեմպիոնները 4:1 հաշվով պարտության էին մատնել Կանադայի թիմին, որը երկու պարտությունից հետո զրկվել է 1/8 եզրափակիչ դուրս գալու հնարավորությունից:

Կրամարիչից առաջ Մարիո Մանջուկիչն էր 2014թ. աշխարհի առաջնությունում դարձել դուբլի հեղինակ Կամերունի թիմի դեմ խաղում:

Խորվաթիայի հավաքականը 4 միավորով խմբի առաջատարն է: Նույնքան միավոր ունի Մարոկկոն, որը 2:0 հաշվով անսպասելի հաղթանակ էր տարել Բելգիայի նկատմամբ:

ԶՈՀՎԵԼ Է Forex Club–Ի ՀԻՄՆԱԴԻՐԸ

Նոյեմբերի 25-ին Մոնակոյում ուղղաթիռ է կործանվել, որը Մոնակո էր թռչում Շվեյցարիայից: Ուղղաթիռում գտնվում էր ռուսաստանցի գործարար Վյաչեսլավ Տարանը: Երկրորդ զոհը 35-ամյա օդաչուն է, որին պարբերականը բնորոշել է որպես շատ փորձառու: Monaðair ուղղաթիռային ընկերությունը պաշտոնապես հրաժարվել է մեկնաբանել հետաքննության մանրամասները:

Վյաչեսլավ Տարանն ավարտել է Վլադիվոստոկի էկոնոմիկայի եւ սերվիսի պետական համալսարանը: Նա Forex Club-ը հիմնադրել է 1997թ. (այժմ աշխատում է որպես Libertex Group բրենդ): Տարանը վերջին տասը տարիներին ապրում էր Մոնակոյում: Նա նաեւ Լոզանում, որտեղից էլ հավանաբար վերադառնում էր ուղղաթիռով, YouHodler կրիպտոքսակը ստեղծող ընկերության վարչության անդամ էր:

● Նոյեմբերի 29-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Հուշերեկո. Վլադիմիր Աբաջյան-95» գրական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Աշխատանքի ժամանակացույցով չնախատեսված հանգստյան եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին կատարված աշխատանքի համար որքա՞ն հավելում է սահմանված:

Լենա Սարուխանյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանգստյան եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքի ժամանակացույցով օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին կատարված աշխատանքը վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Մաքսային հսկողության ներքո գտվող տրանսպորտային միջոցը այլ անձի հանձնելու դեպքում ի՞նչ չափով տուգանք է առաջադրվում:

Հայկ Մուրադյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ մաքսային օրենսգրքի 198 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ մաքսային օրենսգրքի 192 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Բյուզանդ-Հանրապետության փողոցների խաչմերուկում բախվել են Volkswagen Phaeton մակնիշի 001 GG 01 համարանիշի եւ Nissan March մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով տուժածներ չկան: Ըստ տեղեկությունների՝ Volkswagen Phaeton-ը հաշվառված է ՀՀ գլխավոր դատախազության հաշվեկշռում եւ սպասարկում է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: